«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն ASBT04-1816-C(0412)
«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	04 դեկտեմբերի, 2018 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11,
Նիստի սկիզբ՝	09:30

«Այբ» դպրոցի 3-րդ գումարման Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ ՀԽ) նիստին ներկա են եղել ՀԽ-ի անդամներ Անահիտ Ադամյանը, Արթուր Ալավերդյանը, Իեն Քրեյգը (նախագահ), Լուսինե Գալաջյանը, Վազգեն Յակուբյանը: Սարգիս Բաղալյանը միացել է հեռակա կարգով:

Նիստին մասնակցել են Հոգաբարձուների խորհրդի յոթ անդամներից վեցը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Տարբեր ժամանակահատվածներում նիստին մասնակցել են՝

Արամ Փախչանյանը (գործադիր տնօրեն) ներկա էր ամբողջ հանդիպմանը:
Անահիտ Հարությունյանը (Ծրագրերի և գնահատման բաժնի ղեկավար) և Դավիթ Սահակյան (Գործառնական տնօրեն) ներկայացրեցին հաջորդ ուսումնական տարվա ընդունելության կարգը:

Նիստի քարտուղար՝ Սիրանուշ Սուքիասյան

Հարց 1. (Օրակարգի հաստատում):
Իեն Քրեյգը ներկայացրեց նիստի օրակարգը, իսկ ՀԽ-ի անդամները հաստատեցին այն:
Առաջարկ եղավ հաջորդ նիստի օրակարգում նշել, թե որ հարցերն են հաստատման, իսկ որոնք՝ քննարկման կամ ներկայացման:
Որոշում՝ հարց 1:

Հաստատել ՀԽ-ի նիստի դեկտեմբերի 4-ի օրակարգը:
Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 2. (Նախորդ նիստի արձանագրության հաստատում**):**

Իեն Քրեյգն առաջարկեց հաջորդ արձանագրությունները կազմել ավելի համառոտ՝ առանց նշելու քննակումների մանրամասները: Առաջարկվեց բոլոր նիստերի ձայնագրությունները պահել առնվազն 3 տարի :

Որոշում՝ հարց 2:
ՀԽ-ի բոլոր նիստերի արձանագրությունները կազմել հակիրճ, իսկ ձայնագրությունները պահել առնվազն 3 տարի:
Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 3 (Նախորդ նիստից հետո դպրոցի աշխատանքների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ):
Արամ Փախչանյանը ներկայացրեց նախորդ նիստից հետո դպրոցի աշխատանքների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ ըստ հավելված 1-ի:
Հիմնական թեմաները `
Աշխատակիցների մասնագիտական զարգացում
- UCL- ի վերապատրաստման ծրագրերում գրանցված է տնօրենության երեք անդամ:
- «Այբ» դպրոցի տարեկան համաժողովը տեղի ունեցավ «Այբ» և ԴԿԴ-ի 110 ուսուցիչների և ԱԲ թեկնածուի դպրոցից1 ուսուցչի մասնակցությամբ:
- Նորաստեղծ մասնագիտական զարգացման թիմը տրամադրել է մասնագիտական զարգացմանն աջակցություն, կազմակերպվել է յոթ դասընթաց,
- Դիտարկվել է մոտավորապես 70 դասև անմիջապես քննարկվել, սեպտեմբերին բոլոր նոր ուսուցիչների դասերը դիտարկվել են և անմիջապես քննարկվել:

Ուսումնական
- Պատրաստ է ուսուցիչների նոր կառավարման կառուցվածքը;
- Առաջին կիսամյակի համար մշակված է դասընթացների նկարագիր 1-ից 12 դասարանների բոլոր հիմնական առարկաների համար և հասանելի է աշակերտների ու ծնողներին համար:
- Ուսուցիչների աշխատանքի նկարագրությունը և ուսուցիչների գնահատման չափանիշները մշակված և շրջանառված են, կկիրառվեն մի քանի օրվա ընթացքում:
- Ուսումնական հաշվետվության ձևը մշակվել և փոփոխվել է՝ հետադարձ կապի միջոցով:

Համայնքի զարգացում
- Համայնքային ծառայության քաղաքականությունը հաստատվել է, տեղի են ունեցել տարբեր համայնքային միջոցառումներ:

Համայնքային միջոցառումներ
- Միջառարկայական համագործակցության ապահովման նպատակով անցկացվել են մի շարք կրթական այցելություններ (7, 10-12);
- կազմակերպվել են Այբական խաղերը և ամանորյա տոնավաճառը:

Համագործակցություն ուրիշ դպրոցների հետ
- Համագործակցության սկիզբ է դրվել Վանաձորի թիվ 27 դպրոցի հետ;
- Landesschule Pforta- ի հետ համատեղ նախագիծը մոտեցել է իրականացման փուլին:
- Համատեղ նախագծի վերաբերյալ նախնական պայմանավորվածություն կա Westminster դպրոցի հետ:

Հարց 4 (Հաշվետվություն «Այբ» դպրոցի Աշխատանքային պլանի առաջընթացի վերաբերյալ՝ ի հետևումն 2017/18 թթ UCL-ի գնահատման):

Արամ Փախչանյանը ներկայացրեց հաշվետվություն «Այբ» դպրոցի Աշխատանքային պլանի առաջընթացի վերաբերյալ՝ ի հետևումն 2017/18 թթ UCL-ի գնահատման ըստ հավելված 2-ի: Արամ Փախչանյանը անդրադարձավ ավարտված գործողություններին, մասնավորապես `մշակվել է դպրոցի կառավարման կազմակերպչական կառուցվածքը, որոշված են աշխատատեղերը, ավագ տնօրինության աշխատանքի նկարագրությունները մշակված են, անձնակազմի աշխատանքային պարտականությունները հաստատված են գործադիր տնօրենի կողմից, պատրաստ է գործադիր տնօրենի աշխատանքի նկարագրությունը, գործադիր տնօրենի թեկնածուի որոնումն ավարտվել է, գործադիր տնօրենը նշանակված է և կենտրոնանում է ոչ ամենօրյա գործունեության վրա, հիմնական դպրոցի տնօրենն աշխատում է 1-9-րդ դասարանների հետ, 10-12-րդ դասարանների պատասխանատուն գործադիր տնօրենն է, ավագ տնօրինության շաբաթական հանդիպումները պլանավորված են, հանդիպումների արձանագրությունները շրջանառվում են: Մշակվել, հաստատվել և թարմացվել է ՀԽ-ի տարեկան աշխատանքային պլանը, ՀԽ-ն քննարկում է միայն ռազմավարական խնդիրներ, ՀԽ-ի նախագահը ներգրավված չէ առօրյա հարցերի մեջ, մանկապարտեզը ընդգրկված է «Այբ» դպրոցի 5-ամյա ռազմավարական պլանում և այլն: Բազմաթիվ կետեր հիմնականում ավարտված են, բոլորն էլ ընթացքի մեջ են, թեև որոշ ժամկետներ չեն պահպանվել:

Առաջարկվեց Դավիթ Սահակյանին խնդրել ներկայացնելու «Այբ» դպրոցի կառուցվածքի վերաբերյալ հաշվետվություն և մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը իրականացվելիք աշխատանքների մասին տեղեկություն:

Որոշում՝ հարց 2:

Որոշվեց Դավիթ Սահակյանին խնդրել ներկայացնելու «Այբ» դպրոցի կառուցվածքի վերաբերյալ հաշվետվություն և իրականացվելիք աշխատանքների մասին տեղեկություն մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 5. (Հնգամյա ռազմավարական պլանի 6-րդ նախագծի քննարկում և հաստատում):

Իեն Քրեյգը ներկայացրեց հնգամյա ռազմավարական պլանի 6-րդ նախագիծն ըստ հավելված 3-ի:

Առաջարկվեց վերաձևակերպել 7.2 կետը(Ավելացնել դպրոցի շրջանավարտների թիվը աշխարհի լավագույն բուհերում) : Գործադիր տնօրենին հանձնարարվեց տրամադրել նոր ձևակերպումներ և կազմակերպել այս փոփոխության վերաբերյալ առցանց քվեարկություն մինչև դեկտեմբերի վերջ: Ավելցնել 7.3 կետը՝ ներգրավելու ավելի շատ աշակերտներ սփյուռքից և արտերկրից:

Հնչեց մտահոգություն, թե ինչպես դառնալ աշխարհի լավագույն դպրոցներից՝ առաջարկելով միայն հայալեզու կրթություն: Քննարկել սփյուռքից և օտարերկրա աշակերտների ներգրավման հարցը հաջորդ նիստին: Անհարժեշտ է պատրաստել հաշվետվություն, որում ներկայացնել քայլեր՝ օտարեկրյա աշակերտներին ներգրավելու համար, ինչպես նաև դպրոցում այդ հարցի վերաբերյալ վիճակագրությունը: Ներկայացնել հաշվետվությունը հաջորդ նիստին (Արամ Փախչանյան):

Որոշում՝ հարց 5:
Հաստատել հնգամյա ռազմավարական պլանի 6-րդ նախագիծը ըստ հավելված 3-ի, բացառությամբ 7.2 կետի: Ռազմավարական պլանի 6-րդ նախագծում ավելացնել 7.3 կետը՝ «ներգրավել ավելի շատ աշակերտներ սփյուռքից և արտերկրից»:
Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 6. (Հաշվետվություն ֆոնդահայթայթման ընթացիկ արդյունքների մասին):
Արամ Փախչանյանը ներկայացրեց ֆոնդահայթայթման ընթացիկ արդյունքները, որի հաշվետվությունը շուտով կուղարկվի ՀԽ-ի անդամներին :

Հարց 7. (Հաջորդ ուսումնական տարվա ընդունելության կարգի հաստատում):
Անահիտ Հարությունյանը (Ծրագրերի և գնահատման բաժնի ղեկավար) ներկայացրեց 1-ին դասարան ընդունվող աշակերտի հարցը:
Անահիտ Հարությունյանը ներկայցրեց նաև հաջորդ ուսումնական տարվա ընդունելության կարգի փոփոխություններն ըստ հավելված 4-ի:
Առաջարկվող փոփոխությունները ստորև՝

- Տարրական և միջին դպրոցներում յուրաքանչյուր քառորդից հետո թափուր տեղերի լրացում (նախկինում եղել է երկու ընդունելություն՝ համապատասխանաբար դեկտեմբերին և հունիսին)
- Միջին և ավագ դպրոցներում օտարերկրյա, հայերենին լիարժեք չտիրապետող դիմորդների համար 4.2.1 և 4.2.4 2018 թվականի նոյեմբերի 16-ի ASBT04-1815-V (2111) որոշման համաձայն
- Ծրագրերի և գնահատման բաժնի ղեկավարը պատասխանատու է միջին և ավագ դպրոցների ընդունելության քննությունների համակարգման համար
- Միջին դպրոցի ընդունելության համար ավելացնել կետեր՝ դիմորդների համար կազմակերպելու պարտադիր փորձնական դասեր: Դիմորդների հետ խմբային աշխատանքների փուլում ներգրավել դպրոցի աշակերտներին, եթե դիմորդների թիվը բավարար չէ
- Վերանայել ՄԽ-ի դերը ներքին ընդունելության պրոցեսում: ՄԽ անդամները կարող են որպես դիտորդ մասնակցել թեկնածու ուսուցիչների հարցազրույցներին:
- ՄԽ անդամները՝ հոգեբանների, ուսուցիչների, համայնքի անդամների հետ սերտ համագործակցելով, պետք է մշակեն և ներդնեն խնդրահարույց աշակերտների հետ մենթորության ծրագիր, որպեսզի այդ աշակերտների մոտ բարելավվեն նախկինում գրանցված վարքային խնդիրները:
- Ներքին ընդունելության շրջանակներում ուսուցիչների հետ հարցազրույցները պետք է տեսանկարահանվեն:
- Ավագ դպրոցի ընդունելության քննական նյութերը կազմվել են, գնահատվել և քննությունները կազմակերպվել են ԿԳԱԾ-ի ԱԲ քննական կենտրոնի կողմից, սակայն ԿԳԱԾ-ի կասեցման պատճառով այն այլևս չի գործում: Առաջարկվում է ԱԲ քննական կենտրոնի նախկին աշխատակիցներին պայմանագրային հիմունքներով ներգրավել քննական թեստերը կազմելու և ստուգելու գործընթացում:
- Առաջարկվում է քննական նյութերի բովանդակությունն ուսումանսիրել՝ վերհանելու մեր նյութերի և պետական դպրոցական ծրագրի տարբերությունները:
- Առաջարկվում է հստակեցնել ընդունելության չափորոշիչների առաջնահերթությունները՝ հարկ եղած դեպքերում արագ որոշումներ ընդունելու համար:
- Նշվեց նաև, որ դիմորդների խմբային հանդիպումները ԿՀ-ի հետ արդյունավետ էին, սակայն դրանք այլևս չեն իրականացվում:

Որոշում՝ հարց 7:

1. *Հաստատել Ընդունող հանձնաժողովի առաջարկը աշակերտի վերաբերյալ և ընդունել աշակերտին 1-ին դասարան դեկտեմբերի 4-ից :*

Որոշումը կայացված է միաձայն:

2. Հաստատել հաջորդ ուսումնական տարվա ընդունելության կարգի փոփոխություններն ըստ հավելված 4-ի:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 8. (Միջին դպրոցի խնդիրներ):

Բարձրացվեցին ուսուցիչների հաճախակի փոփոխության և ուսուցիչների գնահատման ձևաչափեր ունենալու հարցերը: Նշվեց, որ դպրոցը փորձում է գտնել լուծումներ, որ միջին դպրոցում ուսուցիչները հաճախակի չփոխվեն և աշխատում է ուսուցիչների հմտությունները զարգացնելու ուղղությամբ:

Հաջորդ նիստին ներկայացնել հաշվետվություն Միջին դպրոցի ընթացիկ խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ:

Հանդիպումն ավարտվեց ժամը 13.30-ին: